ՊԱՐԵՆԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՍՆՆԴԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

DOI: 10.52174/2579-2989_2021_2_78

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 150 գիտական հոդվածների, 20-ից ավելի մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

Հիմնաբառեր. *պարենային կորուստներ, սննդային թափոններ, սով, գազերի արտանետում, ֆուդշերինգ, ռեսուրսների խնայողություն*

Պարենային կորուստների և սննդային թափոնների (ՊԿՍԹ) հիմնախնդիրը մշտապես ուսումնասիրվում ու քննարկվում է տեղական և միջազգային մակարդակներում: Ժամանակի ընթացքում հողագնդի տարբեր հատվածներում այն առավել հրատապ է դառնում, քանի որ, բնակչության աճին զուգահեռ, մեծանում է պարենի պահանջարկը, իսկ ուրբանացումը հանգեցնում է գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի կրճատմանն ու պարենային անբավարարության ծավալների ավելացմանը: Ահավասիկ, ՄԱԿ-ի տվյալներով ամբողջ աշխարհում տարեկան թափվում կամ ոչնչացվում է օգտագործման համար պիտանի 1.3 մլրդ տոննա կամ մոտ 940 մլրդ ԱՄՆ դոլարի սննդամթերք[1]: Այդ քանակության 1/3-ը բավարար է լուծելու երկրագնդի բնակչության խոցելի խմբերի սովի հիմնախնդիրը:

Չարիքը միայն այն չէ, որ սահմանափակ բնական ռեսուրսներով և գյուղացու աշխատանքով ստեղծված բարիքի մի զգալի մաս կորչում է: Պակաս չարիք չէ այն իրողությունը, որ աղբանոց նետված կամ խոտանված սննդամթերքը մեծածավալ ջերմոցային գազ է արտանետում մթնոլորտ, որն ակտիվացնում է կլիմայի փոփոխությունն իր բացասական հետևանքներով:

Հոդվածում ներկայացվող հիմնախնդիրը հրատապ է նաև Հայաստանի համար, քանի որ գյուղատնտեսության արտադրական ներուժը սահմանափակ է և հիմնական պարենային ապրանքների (ցորեն, տավարի, խոզի և թռչնի միս, կենդանական և բուսական յուղեր) կեսից ավելի բավարարվում

[1] ФАО, Потери продовольствия и пищевые отходы, http://www.fao.org/food-loss-and-food-waste/ru/

է ներկրումների հաշվին: COVID-19 համավարակի հետևանքով պակասում են պարենի արտադրության և ներմուծման ծավալները, նվազում է բնակչության գնողունակությունը, ուստի կորուստների և թափոնների կրճատումը դառնում է առավել հրատապ մարտահրավեր:

Հոդվածում հատկապես շեշտադրվում են Հայաստանում հավասարակշռված սնուցման մշակույթի զարգացումը, սպառման համար պիտանի սննդի ավելցուկի օգտագործման արդյունավետ ձևերի ներդրումը, մասնավորապես՝ բարեգործական ճաշարանների ցանցի զարգացումը և սննդի բաժանման՝ «Ֆուդշերինգի» կառուցակարգի կիրառումը:

Հայաստանում 2020 թվականի մարտից շարունակվող COVID-19 համավարակի պայմաններում պարենային արտադրանքների արտադրության և ներմուծման որոշակի սահմանափակումները, ինչպես նաև 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախից տարեկան մոտ 100 հազ. տոննա հացահատիկի ներմուծման ներուժի կորուստը հարկադրում են էլ ավելի կարևորել պարենային կորուստների և սննդային թափոնների (ՊԿՍԹ) կրճատումը: Ընդհանուր առմամբ, պետք է արձանագրել, որ ՀՀ-ում ՊԿՍԹ-ի կառավարման խնդիրները դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանանում, և հասարակությունը լիարժեք կերպով չի գիտակցում հնարավոր պարենային ճգնաժամի ամբողջ լրջությունը:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ վիճակագրության կոմիտեի (ՀՀ ՎԿ) տվյալները ցույց են տալիս, որ հատկապես վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է բուսական ծագման պարենային արտադրանքների, հատկապես՝ հացահատիկի արտադրությունը (աղյուսակ 1):

Փորձենք հնարավորինս փաստարկված ուսումնասիրել այդ երևույթի պատճառները: Նախ՝ ՀՀ-ում 2020 թվականին 2016-ի համեմատությամբ 130,6 հազ. հեկտարով կամ շուրջ 37%-ով կրճատվել են ցանքատարածությունները, ինչն աննախադեպ ցուցանիշ է: Ո՞րն է այս երևույթի պատճառը: Բացի ավանդաբար վկայակոչվող պատճառներից (ցածր գին և եկա-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ բուսական ծագման հիմնական արտադրանքների արտադրությունը 2016-2020 թթ.[2]

Ցուցանիշները	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.
Ցանքատարածությունը, ընդամենը՝ հազ. հա, որից՝	353.4	294.5	242.3	227.9	222.8
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր, ընդամենը					
Տարածությունը, հազ. հա	198,1	155,2	130,2	121,2	121,7
Բերքատվությունը, ցենտ/հա	30,7	19,8	26,1	16,9	20,3
Համախառն բերքը, հազ. տոննա	604,2	302,5	337,7	198,7	243,0
Որից՝ ցորեն					
Տարածությունը, հազ. հա	108,7	82,4	66,7	59,9	59,4
Բերքատվությունը, ցենտ/հա	32,4	21,8	28,2	19,6	22,5
Համախառն բերքը, հազ. տոննա	350,4	176,4	187,5	112,6	131,9
Կարտոֆիլ					
Տարածությունը, հազ. հա	28.9	25.3	22.1	20.5	20.5
Բերքատվությունը, ցենտ/հա	209.8	214.9	187.3	199.2	208.2
Համախառն բերքը, հազ. տոննա	606.3	547.4	415.1	404.1	427.3
Բանջարանոցային մշակաբույսեր					
Տարածությունը, հազ. հա	30.2	28.3	21.7	20.6	21.4
Բերքատվությունը, ցենտ/հա	301.8	286.3	258.6	265.0	280.8
Համախառն բերքը, հազ. տոննա	968.6	861.0	628.2	621.6	650.7

[2] Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2020 թ. հունվար-դեկտեմբեր:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Պարենային կորուստների և սննդային թափոնների տեսակարար կշիռն ըստ ապրանքատեսակների (%՝ կորստի ընդհանուր քանակից)
Աղբյուրը՝ World Resources Institute

մըտաբերություն, ոչ կոնդիցիոն սերմացու, ֆինանսական միջոցների և ներդրանքների անբավարարություն, հնացած տեխնիկայի պատճառած մեծ կորուստներ և այլն), մեր կարծիքով, նշանակալի է նաև վիճակագրական տվյալների հավաստիության պակասը: Մասնավորապես՝ 2011-2017 թվականներին ընդունված էր ցանքատարածքի ցուցանիշի հավելագրմամբ լրացուցիչ սուբսիդավորված գներով պարարտանյութեր և դիզելային վառելիք ստանալ գյուղատնտեսության նախարարությունից: Ընդ որում, նախարարությունը գրանցում էր կեղծ ցուցանիշներ և խեղաթյուրում վիճակագրությունը: Հետագայում այս արատավոր գործելաոճից անգամ մասնակի հրաժարումն ու տվյալները հավաստի դարձնելու փորձն ակնհայտորեն հանգեցրին ցուցանիշների կտրուկ նվազման:

Պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար, պատկերավոր ասած, էական նշանակություն ունի նաև «դաշտից մինչև պատառաքաղ» արժեշղթայում ՊԿՍԹ կրճատումը:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ, FAO) տվյալներով, ներկայում աշխարհում արտադրվում է պահանջարկից ավելի պարենամթերք, բայց դրա անհավասարաչափ բաշխվածության և բնակչության վճարունակության տարբեր մակարդակների պատճառով երկրագնդի տարբեր մասերում 690 մլն մարդ կամ բնակչության 8,9%-ը սովի է մատնված[3]: Նման իրավիճակում ուղղակի անհանդուրժելի է պարենի հսկայական քանակությամբ ոչնչացումը կամ աղբանոցում հայտնվելը:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 1,3 մլրդ տոննա ՊԿՍԹ 44%-ը բաժին է ընկնում մրգերին և բանջարեղենին, 20%-ը՝ արմատապտուղներին, 19%-ը՝ ցորենին, 8%-ը՝ կաթնամթերքին, 4%-ը՝ մսին, 3%-ը՝ յուղատու և ընդեղեն մշակաբույսերին, իսկ 2%-ը՝ ձկնեղենին (գծապատկեր 1):

Մինչ պարենային կորուստների և սննդամթերքի թափոնների առաջացման պատճառներին, հետևանքներին ու կրճատման հնարավորություններին անդրադառնալը, դիտարկենք «պարենային կորուստներ» և «սննդային թափոններ» հասկացությունները, որոնց վերաբերյալ 2019 թ. ՊԳԿ-ն տվել է հետևյալ բացատրությունները.

Պարենային կորուստները պարենի մա-

[3] FAO, Food wastage footprint & Climate Change, http://www.fao.org/3/a-bb144e.pdf

տակարարների որոշումների և գործողությունների արդյունքում սննդամթերքի քանակի և որակի կրճատումն է արտադրողից մինչև վաճառք շղթայում, բացառությամբ մեծածախ վաճառողների, հասարակական սննդի ձեռնարկությունների և սպառողների:

Սննդային թափոնները սննդամթերքի քանակի և որակի կրճատումն է մեծածախ վաճառողների, հասարակական սննդի ձեռնարկությունների և սպառողների որոշումների և գործունեության արդյունքում: Սննդային թափոններն առաջանում են մեծածախ վաճառքի և սպառման փուլերում[4]:

ՀՀ ՎԿ ընդունած մեթոդաբանության համաձայն՝ «Կորուստները բեռնափոխադրման և պահպանման բոլոր փուլերում՝ արտադրությունից մինչև սպառում, չօգտագործված պարենամթերքի ծավալն է: Կորուստների առաջացման հիմնական պատճառն իրացման և պահպանման ոչ լիարժեք համակարգերի առկայությունն է: «Կորուստներ» հատվածում չեն ներառվում արտադրության տարբեր փուլերում դրա անհրաժեշտ մաս հանդիսացող անխուսափելի կորուստները, օրինակ՝ ցորենի աղալու, չորացման գործընթացներում, դաշտում տեղափոխման և պահեստավորման հետ կապված կորուստները, ինչպես նաև տնային տնտեսություններում առկա սննդի ու վերամշակման ընթացքում առաջացող այլ կորուստները: Կորուստները հաշվարկվում են ՊԳԿ առաջարկած գործակիցներով, որոնք, պայմանավորված որոշակի հանգամանքներով, կարող են ճշգրտվել»[5]: Դժվար չէ նկատել, որ վերջին՝ «պայմանավորված որոշակի հանգամանքներով, կարող են ճշգրտվել» ձևակերպումն «ազատում» է վիճակագրական կառույցի ձեռքերը և հնարավորություն տալիս կորուստները հասցնելու անտրամաբանական չափերի: Դիցուք՝ աղյուսակ 2-ի տվյալները վկայում են ՀՀ չորս հիմնական մշակաբույսերից երեքի կորստի ցուցանիշի՝ օրինաչափությունից կտրուկ շեղման մասին:

Բերքի կորստի անտրամաբանական աճը չափազանց ակնհայտ է հատկապես ցորենի օրինակով, որը ներկայացված է գծապատկեր 2-ում: Ինչպես երևում է, 2005-2011 թթ. ցորենի կորուստը միջին հաշվով կազմել է արտադրված բերքի 4,4%-ը: 2011 թ.-ից սկսած, հիմնականում վիճակագրական տվյալների խեղաթյուրմամբ պայմանավորված, կորուստներն աճել են և 2019 թ. հասել ընդհուպ 43,5%-ի: Թերևս, այս առումով, միանգամայն տեղին է ՊԳԿ ագրոարդյունաբերության հարցերով պատասխանատու Ռոբերտ վան Օտերդեյքի հետևյալ դիտարկումը. «Հա-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Բուսական ծագման հիմնական պարենային ապրանքների կորուստներն ըստ ՀՀ ՎԿ տվյալների[6]

Արտադրանքը	2005-2010 թթ. միջինը			2011-2015 թթ. միջինը			2016-2019 թթ. միջինը		
	Ամբողջական տոննաժ	Ներառված տոննաժ	% կորուստ	Ամբողջական տոննաժ	Ներառված տոննաժ	% կորուստ	Ամբողջական տոննաժ	Ներառված տոննաժ	% կորուստ
Ցորեն	211,1	11,7	5,5	295,4	30,8	10,4	206,7	57,8	27,9
Կարտոֆիլ	568,6	79,7	14,0	792,1	105,2	13,3	493,2	70,7	14,3
Բանջարեղեն	938,6	29,6	3,1	1120,2	147,8	13,2	946,5	199,1	21,0
Խաղող	200,4	9,8	4,8	256,5	11,4	4,5	329,5	34,8	10,5

[4] Техническая платформа по измерению и сокращению продовольственных потерь и пищевых отходов, http://www.fao.org/platform-food-loss-waste/ru/

[5] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2020 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 78:

[6] Հաշվարկել է հեղինակը՝ ըստ ՀՀ ՎԿ 2005-2020 թթ. «Պարենային ապահովություն և աղքատություն» հրապարակման տվյալների:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ցորենի տարեկան կորուստների շարժընթացը

յաստանում հասցեագրման կարիք ունեցող ամենասուր խնդիրները պարենի կորուստների և թափոնների վերաբերյալ ճշգրիտ տվյալների պակասն է, անտեղյակությունը խնդրի բարդությունից, դրա ներգործությունից, պատճառներից ու արժեշղթաների մասնակիցների, սպառողների, ծառայություն մատուցողների և շրջակա միջավայրի վրա թողած հետևանքներից: Վերհանված խնդիրների թվում են պարենի կորուստների և թափոնների ծավալի կրճատմանն ուղղված ջանքերի ասպարեզում թերի համագործակցությունն ու գործողությունների համակարգումը, ինչպես նաև կլիմայի փոփոխության ազդեցություններին համարժեք ձևով արձագանքման պատշաճ կառուցակարգերի բացակայությունը»[7]:

ՊԿՍԹ կրճատման հիմնախնդիրն ունի գլոբալ բնույթ: Բնավ պատահական չէ, որ 2015 թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ը 193 երկրների ղեկավարների մասնակցությամբ ընդունեց մինչև 2030 թ.-ի Կայուն զարգացման 17 նպատակ (ԿԶՆ): Ըստ 2-րդ նպատակի՝ «Սովի վերացում», հիմնախնդրի լուծման կարևոր ուղիներից մեկն էլ «պարենային կորուստների դեմ պայքարում ներգրավվածությունն է»[8]: Պետք է նկատի ունենալ, որ ԿԶՆ կեսից ավելին անուղղակիորեն դարձյալ առնչվում է այս հիմնախնդրին: Ուստի, Հայաստանը, որպես մասնակից երկիր, պարտավորված է գործուն քայլեր իրականացնել այդ ուղղությամբ: Միջազգային կազմակերպությունների՝ Միավորված ազգերի զարգացման ծրագրի, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Պարենի համաշխարհային և այլ ծրագրերի նախաձեռնությամբ որոշակի միջոցառումներ արդեն իսկ իրագործվում են, սակայն արտադրողների և սպառողների շրջանում ՊԿՍԹ կրճատումը դեռևս զանգվածային և գործնական բնույթ չի կրում: Որպես կոնկրետ օրինակ՝ պետք է վկայակոչել այն, որ տարիներով ձգձգվում է աղբի դասակարգման և արդյունավետ վերամշակման համակարգի ներդրումը, դեռևս եզակի երևույթ է բարեգործական ճաշարանների հովանավորումը, իսկ վերջերս աշխարհում լայն տարածում ստացած «Ֆուդշերինգի» համակարգն ընդհանրապես չի կիրառվում:

«Ֆուդշերինգը» ՊԿՍԹ կրճատման և սովի հաղթահարման համեմատաբար նոր ձեռնարկում է կամ ժամանակակից արտահայտությամբ՝ նոր միտում (թրենդ): Բառացի՝ «Ֆուդշերինգ» հասկացությունն ունի երկու արմատ՝ անգլերեն food - «պարեն, սնունդ» և share - «կիսվել, միասին օգտագործել» իմաստներով: Շատերին է հայտնի, որ զարգացած բազմաթիվ երկրներում հասարակական կարգով գործում են խոցելի խմբերին անվճար սննդամթերք հատ-

[7] http://un.am/hy/news/829
[8] http://makingsense.rbc.ru/sdgs

կացնող ծառայություններ: Այդ նախաձեռնությունը սկզբնավորվել է 2012 թվականին՝ Գերմանիայում: Երկրի պարենի և գյուղատնտեսության նախարարության տվյալներով՝ տարեկան դեն է նետվում օգտագործման համար պիտանի 11 մլն տոննա սննդամթերք: Գերմանիայի կառավարության ընդունած ծրագրով նախատեսվում է մինչև 2030 թվականն այդ ցուցանիշը կրճատել երկու անգամ: Այս գործում մեծ դերակատարություն ունի՝ «Ֆուդշերինգի» կամավորական շարժումը, որին մասնակցում են 50 հազարից ավելի կամավորականներ, և մինչև 2020 թվականը՝ ութ տարվա ընթացքում, կորստից փրկվել է 21,1 մլն տոննա սննդամթերք[9]:

«Ֆուդշերինգի» նախաձեռնությունը շատ կարճ ժամանակահատվածում ոչ միայն տարածում գտավ աշխարհի զարգացած երկրներում, այլև ենթարկվեց որոշակի իրավական կարգավորման: Օրինակ՝ Ֆրանսիայում օգտագործման համար պիտանի սննդամթերք թափելը խոչընդոտվում է օրենքով, իսկ ԱՄՆ-ի Օրեգոն նահանգում ընդհանրապես արգելվում է դեն նետել սննդի որևէ մնացորդ:

Իսպանական Prosalus ոչ առևտրային կազմակերպության հիմնադրած Yonodesperdicio ծառայությունը, բացի օգտագործման համար պիտանի սննդամթերքի որոնման ու կարիքավորներին հատկացման գործառույթներից, պետական աջակցությամբ նաև իրականացնում է դրա խնայողաբար օգտագործման, պահպանման և կորուստների կրճատման քարոզչություն: Այդ թեմաներով հրատարակվում է հանրամատչելի գրականություն, կազմակերպում ուսուցում և վարպետաց դասեր:

«Ֆուդշերինգի» շարժումը, որի կամավոր մասնակիցներին անվանում են ֆուդսերվերներ, գնալով լայն տարածում է ստանում նաև Արևելյան Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում: Հայաստանում դեռևս նման շարժում չի ծավալվում, սակայն ՊԳԿ-ն նախատեսում է իրականացնել ՊԿՍԹ կրճատման նոր ծրագրեր, որոնց շրջանակում նպատակահարմար է աջակցել նաև «Ֆուդշերինգի» նախաձեռնություններին:

[9] https://www.dw.com/ru/%D

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014, 96 էջ:
2. Продовольственные потери и органические отходы на потребительском рынке Российской Федерации: Московская школа управления «Сколково» центр развития потребительского рынка, М., 2019.
3. ФАО, «Техническая платформа по измерению и сокращению продовольственных потерь и пищевых отходов», http://www.fao.org/platform-food-loss-waste/ru/
4. Техническая платформа по измерению и сокращению продовольственных потерь и пищевых отходов, http://www.fao.org/platform-food-loss-waste/ru/
5. https://sfera.fm/news/v-strane/innovatsionnye-pishchevye-produkty-shag-v-storonu-sokrashcheniya-prodovolstvennykh-poter
6. https://news.un.org/ru/story/2020/09/1387072
7. http://www.fao.org/in-action/seeking-end-to-loss-and-waste-of-food-along-production-chain/ru/
8. https://news.un.org/ru/story/2019/03/1350261
9. https://trends.rbc.ru/trends/sharing/5f7ae-8d79a7947d0cef61d7c
10. http://un.am/hy/news/829
11. https://www.dw.com/ru/%D

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор экономических наук, профессор

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

СОКРАЩЕНИЕ ПРОДОВОЛЬСТВЕННЫХ ПОТЕРЬ И ПИЩЕВЫХ ОТХОДОВ КАК НАИБОЛЕЕ ВАЖНЕЙШИЙ ВОПРОС

Проблема продовольственных потерь и пищевых отходов изучается и обсуждается на местном и международном уровнях. Со временем в разных частях земного шара она становится более актуальной, поскольку параллельно росту населения растет спрос на продовольствие, а урбанизация приводит к сокращению ресурсного потенциала сельского хозяйства и увеличению объемов продовольственной недостаточности. По данным ООН, ежегодно во всем мире сбрасывается или уничтожается 1,3 млрд тонн пригодных для употребления продуктов питания стоимостью около 940 млрд долларов. 1/3 этого количества достаточно, чтобы решить проблему голода на земле.

Беда не только в том, что значительная часть созданного ограниченными природными ресурсами и крестьянина блага пропадает. Не меньшим злом является тот факт, что выброшенные на свалку или заброшенные продукты выбрасывают в атмосферу крупномасштабный парниковый газ, который активизирует изменение климата со своими негативными последствиями.

Проблема, представляемая в статье, актуальна и для Армении, поскольку производственный потенциал сельского хозяйства ограничен и более половины основных продовольственных товаров (пшеница, говядина, свинина и птица, животные и растительные масла) удовлетворяются за счет импорта.

В результате пандемии COVID-19 сокращаются объемы производства и импорта продовольствия, снижается покупательная способность населения, поэтому сокращение потерь и отходов становится более актуальным вызовом.

В статье особо подчеркивается развитие в Армении культуры сбалансированного питания, внедрение эффективных форм использования излишков пищи, пригодных для употребления, в частности, развитие сети благотворительных столовых и применение механизмов фудшеринга.

Ключевые слова: *продовольственные потери, пищевые отходы, голод, фудшеринг, выбросы парниковых газов, самообеспеченность продовольствие, ресурсосбережение*

Samvel AVETISYAN
Senior Expert at "Amberd" Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

SECURITY AND CHALLENGES

REDUCING FOOD LOSSES AND FOOD WASTE AS THE MOST IMPORTANT PROBLEM

The problem of food loss and food waste is studied and discussed at the local and international levels. Over time, it becomes more relevant in different parts of the world, as the demand for food increases in parallel with population growth, and urbanization leads to a reduction in the resource potential of agriculture and an increase in food shortage. According to the United Nations, 1.3 billion tons of usable food, or about $ 940 billion, is dumped or destroyed worldwide each year. 1/3 of this amount is enough to solve the problem of hunger on earth.

The evil is not only that a significant part of the wealth created by the limited natural resources and hard work of the peasant is lost. No less evil is the fact that discarded or abandoned products emit large-scale greenhouse gas into the atmosphere, which activates climate change with its negative consequences. The problem presented in the research is relevant for Armenia since the production potential of agriculture is limited and more than half of basic food commodities (wheat, beef, pork and poultry, animal and vegetable oil) are satisfied by imports. As a result of the COVID-19 pandemic, food production and import volumes decreased, and the purchasing power of the population is reduced, so reducing losses and waste is becoming a more urgent challenge.

Keywords: *food losses, food waste, hunger, foodsharing, greenhouse gas emissions, food self-sufficiency, resource conservation*